ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ/CRIMINAL LAW AND CRIMINOLOGY/ УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ

https://doi.org/10.59546/18290744-2024.7-9-33

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության
գլխավոր մասնագետի պաշտոնակատար,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

MELIK MELIKYAN
Acting Chief Expert of the Legal Expertise
Service of the Cassation Court of Republic of Armenia,
Applicant at the Chair of
Criminal Law of YSU Faculty of Law

МЕЛИК МЕЛИКЯН
И.о. главного эксперта службы правовой экспертизы
аппарата Кассационного суда Республики Армения,
соискатель кафедры уголовного права
Юридического факультета ЕГУ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻ ՈՐՈՇ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ

THE PLACE AND SIGNIFICANCE OF PROVOCATION OF CRIME IN SOME INSTITUTIONAL STRUCTURES OF THE GENERAL PART OF CRIMINAL LAW

МЕСТО И ЗНАЧЕНИЕ ПРОВОКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ В НЕКОТОРЫХ ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ СТРУКТУРАХ ОБЩЕЙ ЧАСТИ УГОЛОВНОГО ПРАВА

Ներածություն

Հանցագործության պրովոկացիան եղել և շարունակում է մնալ քրեական իրավունքում հարաբերականորեն քիչ ուսումնասիրված, տեսական ուսումնասիրություններ և գործնական

ուղենիշներ նախանշելու ուղղությամբ աշխատանքներ պահանջող, բազմաշերտ ու բարդ քրեաիրավական կատեգորիա:

Քրեական իրավունքում հանցագործության պրովոկացիան դրսևորված է տարակերպ և իրավունքի տարբեր աղբյուրներում դրա դրսևորումներն արտացոլվում են ինչպես քրեական իրավունքի ընդհանուր, այնպես էլ հատուկ մասերում:

Ներպետական և արտասահմանյան երկրների փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախադեպային իրավունքում արտահայտված դիրքորոշումների, ինչպես նաև տարբեր տեսական դոկտրինների հիման վրա հետազոտման առարկա դարձնելով հանցագործության պրովոկացիայի առանձնահատկությունները՝ ի հայտ են գալիս մի շարք հիմնահարցեր, որոնք, ի թիվս այլնի, կապված են քրեական պատասխանատվության բացառող հանգամանքների, պատիժ նշանակելու, քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուցիոնալ կառուցակարգերում՝ քննարկվող կատեգորիայի զբաղեցրած տեղի և նշանակության հետ:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում ներառվել են հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ մի շարք նոր դրույթներ, որոնք նախկինում հայրենական օրենսդրությամբ նախատեսված չեն եղել և վերը հիշատակված իրավական բազայի պայմաններում պահանջում են մանրամասն աշխատանք՝ ի նպաստ դրանց կատարելագործմանը:

Նշվածով ինքնին պայմանավորվում է ընտրված թեմայի արդիականությունը:

Սույն հոդվածով իրականացվող հետազոտման նպատակն է քրեական իրավունքի վերոգրյալ կառուցակարգերի հետ փոխհարաբերակցել հանցագործության պրովոկացիայի բովանդակային առանձնահատկությունները և նախանշել տվյալ ինստիտուտի զարգացման հետագա այն միտումները, որոնք այդ մասով կնպաստեն քրեական օրենքի նպատակների ու խնդիրների կենսագործմանը:

Նշված նպատակին հասնելու ուղղությամբ սույն աշխատանքում խնդիր է դրվել՝

(i) Դիտարկել քրեական պատասխանատվությունը բացառող, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանքներում հանցագործության պրովոկացիայի դրսևորումները, այդ համատեքստում նաև՝ նշված երևույթը զուգակցելով արդեն համեմատաբար հայտնի և դրա հետ որոշակի զուգահեռներ ունեցող այլ համասեռ երևույթների հետ,

(ii) Ցույց տալ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը պատիժ նշանակելու հարցերում,

(iii) Հետազոտման արդյունքում հանդես գալ գիտականորեն հիմնավորված այնպիսի առաջարկներով, որոնք նպատակամետ կլինեն նախորդ երկու կետերի շուրջ տարված հետազոտությունների արդյունքում վերհանված խնդիրների լուծմանը:

Կատարվող աշխատանքի համար մեթոդաբանական հիմքն են հանդիսացել գիտական ճանաչողությանը հայտնի՝ համեմատահիրավական, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական վերլուծական, անալիզ, սինթեզ և այլ մեթոդները:

Հիմնական հետազոտություն

§1. Հանցագործության պրովոկացիայի հիմնահարցերը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներում

Իրավունքի տարբեր աղբյուրներում հանցագործության պրովոկացիան դրսևորվում է քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակում: Հարկ է նշել,

որ հիշյալ աղբյուրներում հիմնական շեշտադրումը կատարվում է հանցագործության պրովոկացիայի՝ իբրև առանձին քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի անհրաժեշտության վրա:

Վերոգրյալի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք անհրաժեշտ է քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք նախատեսել նաև հանցագործության պրովոկացիան:

Բարձրացված հարցի կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ մի շարք երկրներում հանցագործության պրովոկացիան հիմք է անձի քրեական պատասխանատվությունը բացառելու համար: Մասնավորապես, Իսպանիայի քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածով[1], Լիտվայի քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 6-րդ մասով[2], Սերբիայի քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով[3], Նյու-Յորք նահանգի քրեական օրենքով[4] նախատեսված կարգավորումների համաձայն՝ հանցագործության պրովոկացիայի դեպքում անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Բացի դրանից՝ ԱՄՆ-ի Գերագույն Դատարանը, հաշվի առնելով հրահրված անձի իրավական դրությունը, մատնանշում է պրովոկացիայի անընդունելիությունը, և եթե անձը կատարել է հանցագործություն պրովոկատորի տևական համոզումների, ինտենսիվ ու համառ ազդեցության արդյունքում, բացառվում է վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելը[5]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներով սահմանվել են իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից իրավաչափ գործելու և հանցագործության պրովոկացիայի սահմանազատման համար անհրաժեշտ չափանիշները[6], որոնք ներառում են տվյալ անձանց պասիվ ներգործության և նրանց կողմից ճնշում գործադրելու արգելքի սկզբունքները[7], սուբյեկտի կողմից նախաձեռնություն ցուցաբերելու արգելքը[8], ինչպես նաև նշված սուբյեկտների կողմից իրականացվող միջոցառումների օրինականությունը և դրանց նկատմամբ սահմանված իրականացվող վերահսկողությունը[9]:

---

[1] Տես հետևյալ հղմամբ՝ (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[2] Տես հետևյալ հղմամբ՝ https://www.derechos.org/intlaw/doc/ltu1.html (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[3] Տես հետևյալ հղմամբ՝ (հղման վերջին մուտք՝ https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20%20Code_2019.pdf 13.08.2024 թ.):

[4] Տես հետևյալ հղմամբ՝ https://ypdcrime.com/penal.law/article35.php (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[5] Տես հետևյալ հղմամբ՝ https://www.supremecourt.gov/opinions/16pdf/16-369_09m1.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[6] Այս մասով առավել մանրամասն տես *Մ. Մելիքյան* «Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական առանձնահատկությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում» գիտական հոդվածը, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2022 7-9 (277-279), էջեր 54-61:

[7] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Grba v. Croatia* գործով 2017 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 47074/12, կետեր 102-103, *Constantin and Stoian v. Romania* գործով 2009 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 23782/06 *և* 46629/06, *կետ* 55, *Burak Hun v. Turkey,* գործով 2009 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 17570/04, կետ 44, ինչպես նաև *Sepil v. Turkey* գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07, կետ 34, *Ramanauskas v. Lithuania* գործով 2008 թվականի փետրվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74420/01, կետ 67:

[8] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ վերի հիշատկված՝ *Burak Hun v. Turkey,* գործով վճիռը, կետ 44 և *Sepil v. Turkey* գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, կետ 34, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գառնիկ Գալստյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշման 15-րդ կետը:

[9] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Milinienė v. Lithuania* գործով 2008 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 74355/01 կետեր 37-38, *Teixeira de Castro v. Portugal* գործով 1998 թվականի հունիսի 9-ի

Այս համատեքստում տեսությունում տեսակետեր են ձևավորվել առ այն, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված պրակտիկայի հիման վրա, անհրաժեշտ է հանցագործության պրովոկացիան ներառել քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շարքում, որպեսզի իրավաչափորեն իրականացվող օպերատիվ միջոցառումների դեպքում այն կատարող սուբյեկտի նկատմամբ քրեական պատասխանատվությունը բացառվի[10]:

Մի շարք հեղինակներ կարծում են, որ պայմանավորված նրանով, որ «հանցագործության կատարումը սադրելու» դեպքում անձի կողմից հանցանք կատարելու դիտավորությունը չէր առաջանա առանց պրովոկատորի միջամտության, տվյալ պարագայում բացակայում է հանցագործության սուբյեկտիվ կողմի հատկանիշները, ուստի պրովոկացիայի առկայության պայմաններում հանցանք կատարած անձի նկատմամբ պետք է բացառվի քրեական պատասխանատվությունը[11]:

Որոշ հեղինակներ էլ նշում են, որ կոռուպցիայի հակազդման տեսանկյունից, գործուն միջոց կհանդիսանա «իրավաչափ պրովոկացիայի» նախատեսումը, ինչը կարող է կենսագործվել հանցագործության պրովոկացիայի՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք սահմանելով[12]:

Սույն հետազոտության շրջանակներում առանձնակի կարևորվում է նաև ներպետական փորձի ուսումնասիրությունը՝ կապված իրավունքի այլ ճյուղերով դրսևորվող պրովոկացիոն երևույթների հետ, որոնք լինելով քրեական իրավունքի դաշտից դուրս՝ միաժամանակ իրենց արտացոլումն են գտել նաև քրեական օրենսդրությամբ: Մասնավորապես, դեռևս 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածում ավելացված դրույթն առ այն, որ տվյալ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքների կատարումը հանցագործություն համարվել չի կարող, եթե կատարվել է օրենքով սահմանված դեպքերում առաքինության ստուգման նպատակով[13]:

Տվյալ օրենսդրական փոփոխության և լրացման հիմնավորումներում նշվում է, որ *«[Պ]-րովոկացիոն տերմինի կիրառումը չպետք է շփոթ առաջացնի քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հետ, քանի որ Նախագծի 33-րդ հոդվածով առաքինության նման ստուգման համար սահմանվել է ոչ թե քրեական, այլ կարգապահական ներգործության միջոցի կիրառում, իսկ Նախագծի 35-րդ հոդվածի 9-րդ մասի և Քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով նախատեսված փոփոխություններով բացառվում է հետագայում Կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական պատաս-*

վճիռը, գանգատ թիվ **44/1997/828/1034** կետ 38, *Ramanauskas v. Lithuania* գործով վճիռը, կետ 51, ինչպես նաև *Tchokhonelidze v. Georgia* գործով վճիռը, գործով 2018 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 31536/07, կետ 51:

[10] Տես *Комиссаров В.С., Яни П.С.* Провокационно-подстрекательская деятельность в отношении должностного лица как обстоятельство, исключающее ответственность за получение взятки // Законность. 2010, էջեր 3-8:

[11] Տես *Волкова И.А.* Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // Закон и право. 2020. № 1, էջեր 106-108, *Жарких И.А.* Перспективы регламентации и развития института провокации преступления в системе норм уголовного права // Вопросы российской юстиции. 2021. № 12. էջեր 311-319, *Дорогин Д.А.* «Провокация совершения преступления» как обстоятельство, исключающее уголовную ответственность // Актуальные проблемы уголовного права, криминологии и уголовно-исполнительного права : научные труды кафедры уголовного права. Вып. 7. М., 2017. էջեր 39-52:

[12] Տես *Милюков С.Ф., Никуленко А.В.* Провокация в борьбе с коррупцией: диалектическое противоречие и пути выхода из него // Актуальные проблемы экономики и права. 2016. № 4. էջեր 45-53, *Капинус О.С.* Практика Европейского суда по правам человека по вопросу провокации преступления и ее уголовно-правовое значение // Законы России: опыт, анализ, практика. 2014. № 12, էջեր. 62-70:

[13] Տես «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-151-Ն օրենքը:

խանգարվության կիրառումը: Նշված միջոցը կրում է բացառապես Կոմիտեի ծառայողների բարեվարքության և առաքինության ստուգման դեր և կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության[14]*»:*

Հարկ է նշել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածում տվյալ կարգավորումը պահպանվել է և դրա 2-րդ մասում ամրագրվել է, որ կաշառքի պրովոկացիա չի համարվում օրենքով սահմանված դեպքում առաքինության ստուգման նպատակով նույն հոդվածի 1-ին մասով նկարագրված արարքի կատարումը:

Վերոնշյալից հետևում է, որ ՀՀ քրեական իրավունքում արդեն իսկ գործում է «իրավաչափ պրովոկացիան» և հայ օրենսդիրն օրենսդրական մակարդակում ամրագրել է՝ հանրօգուտ նպատակների իրականացման առումով կատարվող պրովոկացիոն միջոցառումները՝ այդկերպ դրանք իրականացնող սուբյեկտի գործողությունները համարելով լեգիտիմ:

Միաժամանակ, հնարավոր են իրավիճակներ, երբ անձը, ողջամտորեն զգալով հանցավոր ոտնձգության կատարման վերահաս վտանգը, պրովոկացիոն եղանակներով մյուս անձին «բերում» է հանցագործության կատարմանը՝ կանխելով կամ խափանելով այն, ինչպիսի իրավիճակը փաստորեն կարելի է մեկնաբանել հիմնավորված ռիսկի ներքո:

Հարկ է նշել նաև, որ հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվության բացառման անհրաժեշտության հարցը կարող է դիտարկվել նաև հանցանքը կատարելու պահին իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու դիտանկյունից, այնքանով, որքանով անձի նկատմամբ գործադրվում է հոգեբանական ներգործություն:

Այս համատեքստում կարիք է առաջանում հանցագործության պրովոկացիայի դրսևորումները զուգակցելու քրեական իրավունքում արդեն համեմատաբար հայտնի և պրովոկացիայի հետ որոշակի զուգահեռներ ունեցող այնպիսի կատեգորիայի հետ, ինչպիսին աֆեկտն է:

Նախ հարկ է նշել, որ աֆեկտը նշանակալի դեր է խաղում սուբյեկտի mens rea-ի («մեղավոր միտք») կամ հոգեվիճակի որոշման գործում, ինչն էական նշանակություն ունի հանցավորի դիտավորությունը որոշելու համար: Օրինակ, եթե սուբյեկտի հուզական վիճակը խաթարում է գիտակցված գործելու նրա կարողությունը, ապա դա ազդում է նրա արարքի որակման վրա՝ կանխամտածված արարք կատարելու փոխարեն այն վերածելով ժամանակավոր հուզական խանգարման ազդեցության տակ հանցավոր ոտնձգության կատարման[15]:

Աֆեկտը որոշ դեպքերում այն կանխորոշիչ նշանակություն ունեցող գործոնն է, որի առկայությամբ կարող է բացառվել հակաիրավական արարք կատարած անձի մեղսունակությունը, հետևաբար նաև քրեական պատասխանատվության ենթարկվելու կարողությունը[16]:

Հարկ է նշել, որ քրեական օրենսդրության մեջ աֆեկտ և պրովոկացիա քրեաիրավական կատեգորիաները հաճախ միմյանց հետ փոխհարաբերակցվում են, և աֆեկտն իր ուղղակի ազդեցությունն է ունենում՝ պարզելու, թե որքանով է անձը պրովոկացիայի արդյունքում գիտակցել իր արարքի բնույթն ու դրսևորել կամային վարքագիծ տվյալ ազդեցության ներքո հակաիրավական արարք կատարելիս:

Օքսֆորդի համալսարանի հետազոտողներն աֆեկտը բնութագրել են իբրև անհատի էմոցիոնալ վիճակ, վերջինիս վարքագծին և հոգեկան վիճակին ազդող ինտենսիվ գործոն, որով

[14] Տես «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի հիմնավորումները՝ www.parliament.am կայքում:
[15] Տես *Ashworth, A.* "Principles of Criminal Law" (7th edition), Oxford University Press., Oxford, էջեր 100-120, (2022):
[16] Տես *Duff, A., & Green, S.,* "The Philosophy of Criminal Law: Theory and Practice", Oxford University Press, Oxford, 2018, էջեր 180-205

անձի մոտ «ակնթարթորեն» ձևավորում է խիստ հուզական հոգեվիճակ: Վերջիններս նշել են, որ եթե պրովոկացիան սովորաբար ծագում է արտաքին ազդակներից, որոնք նպատակ են հետապնդում հուզական արձագանք առաջացնելու, ապա աֆեկտը, վերաբերում է անհատի ավելի լայն հուզական կամ հոգեբանական վիճակին և հոգեկան խիստ հուզմունքի առաջացումը չի համարվում հոգեբանական ներգործություն կատարող սուբյեկտի նպատակը[17]:

Այսպիսով, զուգահեռներ անցկացնելով հանցագործության պրովոկացիայի և աֆեկտի միջև՝ հարկ է արձանագրել հետևյալը.

- ինչպես պրովոկացիան, այնպես էլ աֆեկտը համարվում են անձի հոգեկան վիճակի, վարքագիծը տիրապետելու և սեփական արարքների նշանակությունը գիտակցելու վրա ազդող գործոններ,

- պրովոկացիան հանդիսանում է քողարկված բնույթի արարքների ամբողջություն, որի նպատակը հենց անձին հանցագործության կատարմանը «ներքաշելն» է, մինչդեռ աֆեկտի պարագայում, անձին հոգեկան խիստ հուզմունքի հասցնող անձը նպատակ չի հետապնդում վերջինիս կողմնորոշելու հանցանքի կատարման,

- աֆեկտի պարագայում տվյալ հոգեվիճակի առաջացման պատճառ հանդիսացող անձը չի ձգտում մեկ այլ անձի մոտ առաջացնել հոգեկան խիստ հուզմունքի վիճակ կամ առնվազն անտարբեր է նրա հուզական վիճակի նկատմամբ, մինչդեռ պրովոկացիայի պարագայում սուբյեկտը մտադրված է «մոլորության» մեջ գցել անձին և հենց դրա միջոցով վերջինիս համար առաջացնել բացասական հետևանքներ,

- աֆեկտը պրովոկացիայի դեպքում, դրան ենթարկվող անձի արարքների և օբյեկտիվ իրադրության միջև համարվում է համաչափության ցուցիչ:

Վերոգրյալից հետևում է նաև, որ եթե հոգեբանական ներգործության արդյունքում պրովոկացիայի ենթարկված անձը դրա հետևանքով հանցանք կատարելու պահին հոգեկան առողջության խնդիրների հետևանքով չի գիտակցել իր արարքի հակահիրավականությունը կամ ամբողջությամբ չի կարողացել ղեկավարել իր արարքը, որի համար պատճառ կարող է հանդիսանալ նաև աֆեկտի վիճակում գտնվելը, ապա տվյալ պարագայում վերջինս պետք է համարվի անմեղսունակ: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ պրովոկացիայի ենթարկված անձն ամբողջությամբ զրկված չի եղել գիտակցելու իր կողմից կատարվող արարքի հակահիրավականությունը և ղեկավարելու դրանք, վերջինս կհամարվի սահմանափակ մեղսունակ՝ ենթակա լինելով քրեական պատասխանատվության:

Այսպիսով, հանցագործության պրովոկացիայի ազդեցության տակ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս հասցնող անձի համար քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանքի նախատեսումը դառնում է առարկայազուրկ ներքոգրյալ հիմնավորումներով.

ա) Եվրոպական դատարանի կողմից սահմանված և սույն հետազոտությամբ առանձնացված ստանդարտների պայմաններում հստակ գծված է սահմանը՝ օրինաչափ վարքագծի և պրովոկացիայի միջև, ուստի այն չհատելն արդեն իսկ բացառում է քրեական պատասխանատվությունը և դրա ավելորդ շեշտադրումը կլինի իմաստազուրկ,

բ) բոլոր այն դեպքերում, երբ խոսք է գնում իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող հարաբերություններում պրովոկացիոն արարքների մասին, որոնք արտաքին հատկանիշ-

[17] Տ՛ես, *David Ormerod and Karl Laird,* "Smith and Hogan's Criminal Law", 15th edition, Oxford University Press, էջեր 305-310:

ներով նմանվում են հանցագործության պրովոկացիայի իրականացմանը, դրանց համար սահմանված են լինում իրավական պատասխանատվության այլ՝ տվյալ իրավունքի ճյուղով սահմանված հիմքեր, որոնք ընդհանրապես քրեական իրավունքի տիրույթից դուրս են գտնվում,

գ) որոշակի իրավիճակներում, երբ ա) կետում հիշատակված սահմանը կարող է հատվել պայմանավորված հաստատապես հայտնի նախատեսվող հանցագործության իրականացումը խափանելու համար, և եթե հետապնդվող նպատակին չէր կարելի հասնել առանց ռիսկի դիմելու, և ռիսկի դիմած անձն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը կանխելու համար, այդ դեպքում գործադրելի կլինի հիմնավորված ռիսկի հիմքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը,

դ) պրովոկացիայի արդյունքում, անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության դեպքում կիրառելի կլինեն ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածները, որոնցով արդեն իսկ կապահովվեն հանցագործության պրովոկացիայի ազդեցությամբ հանցանքը կատարելու պահին իր արարքի հակահիրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու ունակությունը կորցնելու, կամ դրանք ամբողջությամբ չգիտակցելու կամ չղեկավարելու դեպքերում քրեահիրավական արդարացի միջոցներ կիրառելու մեխանիզմները:

Միաժամանակ, խոսելով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներում հանցագործության պրովոկացիայի մասին՝ հարկ է նկատել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներում կատարված նորամուծությունների շարքում գտնվող 32-րդ հոդվածի 7-րդ և 34-րդ հոդվածի 6-րդ մասերում ամրագրված՝ պրովոկացիայի որպես համապատասխանաբար՝ անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ պաշտպանության վիճակները բացառող պայմանի առկայությունը վերաբերելի է նաև նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավիճակին:

Մասնավորապես, օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով անհաղթահարելի ուժ ստեղծող կամ մեկ ուրիշին իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրելուն դրդող և հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն անհաղթահարելի ուժի կամ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնող անձի արարքները բխում են պրովոկացիայի դասական ընկալումներից և էությունից, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված հիշյալ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի դեպքում, ևս, պետք է կատարվի լրամշակում և նախատեսվի պրովոկացիայի արգելքի պայմանը:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններում արձանագրված է, որ ներկայացված դրույթով, ըստ էության, խոսքն իրավիճակի սադրումի մասին է և հիշյալ նորմով նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը կոչված է կանխելու քրեական պատասխանատվությունից ազատելու նշված հանգամանքի կիրառման հնարավոր չարաշահումներն այն դեպքերում, երբ անձն ինքն է ստեղծում դրա կիրառման համար «իրավաչափ» իրավիճակ, ինչը, սակայն, օրենսդրական մակարդակով չի ամրագրվել[18]:

[18] Տես *Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան,* «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջեր 89-90:

§2. Հանցագործության պրովոկացիան՝ իբրև քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանք.

Նախորդիվ արձանագրելով հանցագործության պրովոկացիայի՝ որպես քրեական պատասխանատվության բացառող առանձին հանգամանք նախատեսելու անհրաժեշտության բացակայությունը, այնուամենայնիվ հնարավոր չէ անտեսել այն հանգամանքը, որ հանցագործության պրովոկացիայի ազդեցությունը հանցագործություն կատարելու էական խթանիչ գործոն է և հնարավոր չէ անտեսել այն հանգամանքը, որ հանցագործություն կատարելու դրդապատճառն առանց տվյալ ներգործության չէր առաջանա, հետևաբար պահանջվում է հասկանալ տվյալ հանգամանքի քրեաիրավական նշանակությունը՝ ըստ դրա փորձելով ուղենշել այն անհրաժեշտ զարգացումները, որոնք այդ մասով կնպաստեն վերաբերելի կարգավորումների արդիականացմանը:

Տեսությունում նշվում է, որ պրովոկացիայի ենթարկված անձը, թեև գործում է պրովոկատորի ազդեցության տակ, սակայն դիտավորություն է ունենում հանցագործություն կատարելու, ուստի սադրանքի ենթարկված անձն իր կատարած հանցագործության համար պետք է պատասխանատվության ենթարկվի[19]:

Հետաքրքիր է Վ. Ն. Բորկովի մոտեցումը՝ կապված պրովոկատորի ազդեցության ներքո հանցագործություն կատարած անձի նկատմամբ հասարակության վերաբերմունքի փիլիսոփայական և իրավական մոտեցումների վերաբերյալ: Վերջինս նշում է, որ պետությունը չպետք է գործադրի պատժիչ մեխանիզմներ իր ներկայացուցիչների կամայականության հետևանքով դեռևս չկատարված, կամ արդեն կատարված, բայց էական վնաս չհասցրած հանցագործության համար, իսկ պրովոկացիայի ենթարկված անձի կողմից էական վնաս պատճառած կամ ծանր հետևանքներ առաջացրած հանցանքը չի կարող դուրս մնալ քրեական իրավունքի դաշտից[20]:

Հետևաբար, պրովոկացիայի ենթարկված անձի կողմից հանցագործությունը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք դիտարկելու չափազանց մեղմ և անարդարացի համարվելու պայմաններում, իրատեսական է թվում տվյալ իրավիճակում այնպիսի հնարավորությունների նախատեսումը, որով իրավակիրառը հնարավորություն կունենա պրովոկացիոն ազդեցության ենթարկված անձին ազատելու քրեական օրենքով պահպանվող օբյեկտին էապես բարձր վտանգավորություն ունեցող վնաս չհասցրած անձին:

Ընդհանրապես, խոսելով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի մասին, և միաժամանակ չշեղվելով հիմնական հետազոտման առարկայից՝ նշված ինստիտուտը հակիրճ կարելի է բնութագրել՝ որպես օրենսդրի կողմից ցուցաբերած մարդասիրական քայլ, բոլոր այն դեպքերում, երբ որոշակի հանգամանքների զուգորդմամբ քրեական օրենքով պահպանվող արժեքի նկատմամբ թույլ է տրվում հանցագործության բոլոր հատկանիշները պարունակող ոտնձգություն, սակայն որոշակի՝ հատուկ հանգամանքների հաշվառմամբ սուբյեկտն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Այս կամ այն հանգամանքը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատող հիմք նախատեսելիս պետք է պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են, թե ինչպե՞ս կարող է այն նպաստել հասարակական կարգի և սոցիալական արդարության վերականգնմանը[21],

[19] Տես *Волженкин Б.В.* Провокация или оперативный эксперимент? // Законность. 1996. № 6, էջեր 26-¬30, Хомич В.М. Оперативный эксперимент без провокации взятки // Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции. 2009. № 2, էջեր 297-317:

[20] Տես *Борков В.Н.* Провокация преступления: уголовно-правовая оценка действий провокатора и спровоцированного / В.Н. Борков // Законы России: опыт, анализ, практика. - 2019. - № 6, Էջեր 68-74:

[21] Տես *Gerry Johnstone* “Restorative Justice: Ideas, Values, Debates, 2013, Routledge, էջեր 45-60:

կամ հասարակության բարոյական և էթիկական չափանիշների հաշվառմամբ՝ հանուն հասարակական արժեքների, թույլ տրված հանցանքը որքանո՞վ կարող է «դարձնել ներելի»[22]:

Նշվածի համատեքստում հատկանշական է վերը շարադրյալ ստանդարտների տրամաբանությունից բխող դոկտրինալ մեկնաբանությունն առ այն, որ պրովոկացիան որպես քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանք դիտարկելն էական նշանակություն կարող է ունենալ իրավական համակարգում արդարության ապահովման համար, որով թույլ չի տրվի անձին անարդարացիորեն պատժել այն հանցագործությունների համար, որը նա կատարել է ուրիշների՝ հաճախ իրավապահների ակտիվ ներգործության ներքո[23]:

Միևնույն ժամանակ պետք է ուշադրություն դարձնել տեսաբանների կողմից արտահայտված վերը հիշյալ այն թեզերը, որոնց համաձայն՝ պրովոկացիան հանդիսանում է հանցագործություն կատարելու վճռականություն առաջացնելու էական գործոն և առանց այդ ներգործության, սուբյեկտի կողմից հանցանք կատարելու վճռականություն չէր ցուցաբերվի, փաստորեն ուղիղ համեմատական կերպով բարձրացվում է նաև պրովոկացիոն ներգործության ներքո հանցագործություն կատարած անձի «ներելիությունը»:

Այս հանգամանքով պայմանավորված՝ հանցագործության պրովոկացիայի դեպքում քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատող հանգամանք նախատեսելու դեպքում իրատեսական է թվում հանցագործության պրովոկացիայի ենթարկված անձի համար՝ կոնկրետ հանգամանքների հաշվառմամբ[24], ոչ թե հայեցողական, այլ պարտադիր կիրառման ենթակա պայման դիտարկելը, հակառակ պարագայում պրովոկացիայի ենթարկված անձի կողմից հանցանք կատարելու դեպքում՝ համապատասխան հանգամանքների հաշվառմամբ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը կկլանվի գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքի մեջ և առանձին հիմքի նախատեսումը կկորցնի իր իրավական արժեքը:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ հանցագործության պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորության պայմաններում, պետք է նաև որոշակի զսպիչներ սահմանվեն ծանր և առանձնապես ծանր հանցագործության դեպքերում և այդ իրավական հնարավորությունը պետք է տարածվի առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար:

§3. Հանցագործության պրովոկացիան՝ որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք

Հաշվի առնելով, որ հոգեբանական այն ազդեցությունը, որը պատճառվում է հանցագործության պրովոկացիայի ենթարկվող անձին, և որի արդյունքում փաստացի նվազեցվում է վերջինիս սոցիալական վտանգավորությունը[25], անհրաժեշտություն է առաջանում քննարկ-

[22] Տես *Joel Feinberg,* The Moral Limits of the Criminal Law: Volume 1, Harm to Others, 2022, Oxford, Oxford University Press, էջեր 200-225:

[23] Տես *Андреевна Ж. И.,* Провокация преступления в уголовном праве России, Специальность: 12.00.08 – Уголовное право и криминология; уголовно-исполнительное право, Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Մոսկվա 2021, էջեր 213-214:

[24] Այդպիսի հանգամանքներ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատող հիմքերի համալիր վերլուծության արդյունքում կարելի է համարել՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելը, քրեական հետապնդման մարմինների հետ համագործակցելը, իրեն մեղսագրվող արարքը չվիճարկելը, վնաս պատճառած լինելու դեպքում հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը:

[25] Այս մասով տես նաև *Волкова И.А.* Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // Закон и право. 2020. № 1, էջեր 106-108, *Жарких И.А.* Перспективы регламентации и развития института

ման առարկա դարձնել հանցագործության պրովոկացիայի՝ իբրև քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող առանձին հանգամանք դիտարկելու հարցը:

Հարկ է նշել, որ արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրություններում, մասնավորապես Լիտվայի քրեական օրենսգրքի 59-րդ[26] , Օմանի քրեական օրենսգրքի 78-րդ[27], Զիմբաբվեի քրեական օրենսգրքի 260-րդ[28], Հարավային Սուդանի քրեական օրենսգրքի 225-րդ, 231-րդ, 236-րդ[29] հոդվածներով հանցագործության պրովոկացիան տարբեր դրսևորումներով համարվում է քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքի նախատեսման մասին բազմիցս անդրադարձ է կատարվել նաև իրավական դոկտրինում:

Անդրադառնալով պրովոկացիայի՝ որպես արարքի կատարման նախադրյալ հանդիսանալու հանգամանքին տեսությունում նշվել է, որ թեև պրովոկացիան կարող է բացատրել սուբյեկտի վարքագծի վերահսկողության կորուստը, սակայն միաժամանակ, չպետք է անտեսվի նրա կողմից հանցանք կատարելու փաստը, ուստի պրովոկացիայի ազդեցությամբ հանցավոր ոտնձգության իրականացումը դիտարկման է ենթակա պատիժը մեղմացնող հանգամանքի համատեքստում[30]: Այս մեկնաբանությունը կարելի է փոխկապակցել այն ընդհանուր տեսակետի հետ, որ անձի մոտ հոգեկան կամ ֆիզիկական ճնշում գործադրելու միջոցով կոնկրետ հանցագործություն կատարելու վճռականություն առաջացնելը նվազեցնում է տվյալ սուբյեկտի սեփական արարքները կառավարելու գիտակցումն ու ազատությունը, ինչն էլ հենց պետք է հաշվի առնվի իբրև պատիժը մեղմացնող հանգամանք[31]:

Կրիմինոլոգիական հայեցակետում՝ Ս.Կուգուշևան կարծում է, որ «պրովոկացիայի ազդեցության տակ կատարված հանցագործության սոցիալական վտանգի նվազեցումը պետք է ի վերջո արտացոլվի անձի նկատմամբ նշանակվող պատժի մեջ՝ ցույց տալով դրա մեղմացուցիչ հանգամանք դիտարկվելու փաստը[32]: Կարևոր է հաշվի առնել նաև, որ նման հանգամանքի նախատեսումը դատարանին թույլ կտա հանցագործության պրովոկացիայի բոլոր դեպքերում հաշվի առնել պրովոկացիայի ենթարկված անձի կողմից կատարված արարքի ավելի փոքր սոցիալական վտանգը և այն հանգամանքները, որոնք դրդել են պրովոկացիայի ենթարկված անձին կատարել հանցագործությունը, ինչպես նաև արդար պատիժ սահմանել՝ հաշվի առնելով հանցագործության հասարակական վտանգավորության բնույթն ու աստիճանը և կատարողի անձը[33]:

провокации преступления в системе норм уголовного права, Журнал: Вопросы российской юстиции, № 12, 2021, էջեր 311-319:

[26] Տես հետևյալ հղմամբ՝ https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20%20Code_2019.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[27] Տես հետևյալ հղմամբ՝ http://www.mola.gov.om (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[28] Տես հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/pdfid/4c45b64c2.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[29] Տես հետևյալ հղմամբ՝ https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/South-Sudan-Penal-Code-TIP-Articles.pdf հղման վերջին մուտք՝ 13.08.2024 թ.):

[30] Տես *Duff, A., & Green,* S. (2018). *The Philosophy of Criminal Law: Theory and Practice*. Oxford University Press, Oxford, էջեր 180-205:

[31] Տես *Бранчель И. И.,* Провокация и инсценировка преступлений при осуществлении оперативно-розыскной деятельности, Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции, 2011, էջեր 72-90:

[32] Տես *Кугушева С. В.* Провокация преступления: проблемы уголовно-правовой квалификации // Уголовное право. – 2005. – № 10. էջեր 25-26:

[33] Տես *Волкова И. А.* Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // Закон и право. 2020. № 1, էջեր 106-108, *Жарких И. А.* Перспективы регламентации и развития института провокации преступления в системе норм уголовного права // Вопросы российской юстиции. 2021. № 12, էջեր 311-319:

Քննարկվող հարցի շրջանակներում պետք է նշել նաև, որ պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարելը չի կարող մեկնաբանվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հանցանքը հանցագործությունից տուժած անձի հակահրավական վարքագծի ազդեցության տակ կատարելու տիրույթում, քանզի նախ՝ պրովոկացիայի պարագայում տուժողի կարգավիճակում իրականում հայտնվում է այն անձը, որը հանցագործությունն իրականացնում է պրովոկատորի ներգործության արդյունքում, և երկրորդ՝ նոր օրենսդրությամբ քրեական հակահրավականությունը հանդիսանալով հանցագործության օբյեկտիվ չափանիշ, սույն դեպքում իրենից ենթադրում է հանցանքի կատարում, մինչդեռ պրովոկոցիոն ներգործությունը դեռևս չի ենթադրում հանցակազմի տարրերի առկայություն:

Պետք է նաև ընդգծել, որ մեղմացուցիչ հանգամանքի նախատեսումը շաղկապված կլինի նաև նախորդ պարագրաֆում ներկայացված եզրահանգման հետ՝ կապված որոշ դեպքերում հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունից ազատող հիմքի նախատեսման վերաբերյալ, այնքանով, որքանով որպես մեղմացուցիչ հանգամանք՝ պրովոկացիայի ազդեցությամբ ոտնձգություն իրականացրած անձի կողմից էական վնաս հասցնելու դեպքում այն կլինի արդարացի և համաչափ պատիժ նշանակելու գործիք:

Եզրակացություն.

Ամբողջացնելով սույն հոդվածում վկայակոչված իրավական դիրքորոշումները հնարավոր եղավ ցույց տալ հանցագործության պրովոկացիայի առանձահատկությունները քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակներում:

Այդ շրջանակում ստացվեց նաև համեմատականներ անցկացնել հանցագործության պրովոկացիայի և քրեական իրավունքում հայտնի՝ նշված երևույթի հետ որոշակի զուգահեռներ ունեցող կատեգորիաների միջև:

Միաժամանակ, կատարված աշխատանքի շնորհիվ արձանագրվեց հանցագործության պրովոկացիայի համար քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք նախատեսելու աննպատակահարմար լինելը, հանցագործության պրովոկացիայի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու առանձին հանգամանքի, ինչպես նաև պատիժը մեղմացնող առանձին հանգամանք հանգամանքներ նախատեսելու անհրաժեշտությունը**, ուստի կարելի է փաստել, որ հնարավոր եղավ նաև հասնել սույն աշխատանքով ուսումնասիրության առարկա դարձված խնդիրների վերհանմանը և դրա նպատակների իրագործմանը:**

Ի ապահովումը փաստագրված խնդիրների և դրանց լուծման, ինչպես նաև այդ մասով իրավունքի հետագա զարգացման նպաստմանը ներկայացվում են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Իրավունքի տարբեր աղբյուրներում հանդիպող մոտեցումը, որտեղ հանցագործության պրովոկացիան համարվում է նաև քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք, արդարացված չէ այն հիմնավորումներով, որ Եվրոպական դատարանի սահմանված չափանիշներն արդեն իսկ տարանջատել են հանցագործության պրովոկացիան և համապատասխան սուբյեկտների իրավաչափ գործելու պայմանները, իրավունքի այլ ճյուղերով կարգավորվող հարաբերություններում արտահայտվող պրովոկացիոն դրսևորումները քրեական իրավունքի դաշտից դուրս են և դրանցով նախատեսվում են այլ ներգործության ձևեր, հաստատապես հայտնի կամ ողջամտորեն ակնկալելի վերահաս վտանգի դեպքում պրովոկացիոն մեթոդներով այդ իրավիճակների խափանումը տեղավորվում է հիմնավորված ռիսկի հիմքով քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակներում, իսկ պրովոկացիայի արդյունքում, ան-

մեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության դեպքում կիրառելի կլինեն ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով նախատեսված իրավադրույթները:

2. Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիայում, ինչպես անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության պարագայում, պրովոկացիան դիտարկել որպես անհաղթահարելի ուժի, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի առկայությունը բացառող պայման՝ հետևյալ սահմանմամբ.

«Հոդված 35. Անհաղթահարելի ուժը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը

(...)

4. Անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով նախատեսված հիմքով, եթե թույլ է տվել սույն հոդվածի 1-ին հիմքով նախատեսված որևէ իրավիճակի պրովոկացիա, այսինքն՝ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով ինքն է ստեղծել անհաղթահարելի ուժ կամ մեկ ուրիշին դրդել է իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրել՝ հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն անհաղթահարելի ուժի կամ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնելու համար»:

3. Հանցագործության պրովոկացիայի ենթարկված անձի համար քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանք նախատեսելու առարկայազուրկ համարվելու և միաժամանակ, այդ ազդեցությամբ կատարված արարքի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ առաջարկվում է նախատեսել քրեական պատասխանատվությունից ազատվելու նոր հիմք՝ լրացնելով ՀՀ քրեական օրենսգրքում հետևյալ բովանդակությամբ 83[1]-րդ հոդվածով.

«Հոդված 83[1] Քրեական պատասխանատվությունից ազատելը՝ պայմանավորված հանցագործություն պրովոկացիայով.

«Պրովոկացիայի հետևանքով առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»:

4. Հաշվի առնելով պրովոկացիայի ազդեցությամբ հանցանք կատարող անձի սուբյեկտային առանձնահատկությունները՝ պայմանավորված վերջինիս վտանգավորության, սեփական վարքագիծը տնօրինելու կարողության նվազման հետ, ինչպես նաև քննարկվող մեղմացուցիչ հանգամանքն անհնար համարելով մեկնաբանել ՀՀ գործող քրեական օրենսգրքի՝ քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող այլ հանգամանքների տիրույթում, արդարացված կլինի պրովոկացիայի՝ որպես առանձին մեղմացնող հանգամանքի նախատեսումը, որն իրավակիրառի կողմից պարտադիր հաշվի կառնվի տվյալ ազդեցության ներքո հանցանք կատարած անձի պատժի անհատականացման հարցերում, նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում:

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը լրացնել 13-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 70. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները.

(...)

13) հանցանքը պրովոկացիայի ազդեցությամբ կատարելը»:

Ամփոփագիր: Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում իր ուրույն տեղն ունեցող երևույթ է, որի շուրջ ձևավորված հարուստ փորձի պայմաններում անգամ, տարբեր երկրների օրենսդրություններում, դատական նախադեպերում, դոկտրիններում ունենում է տարբեր, հաճախ իրար հակասող դրսևորումներ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ գործող ՀՀ քրեական օրենսգիրքն անմասն չմնաց նաև հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ դրույթներից, որի արդյունքում նոր հորիզոններ ստեղծվեցին ի նպաստ այդ մասով իրավունքի զարգացման և գործնական առումով թիրախային կիրառման շուրջ հետագա աշխատանքներ ծավալելու համար:

Հանցագործության պրովոկացիայի շուրջ ձևավորված տեսական և գործնական իրավական բազայի բաղկացուցիչ մաս է կազմում նաև քրեական պատասխանատվությունը բացառող, քրեական պատասխանատվությունից ազատող և քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքներում քննարկվող երևույթի արտացոլումները, որոնք հարաբերակցվում են քրեական իրավունքում հայտնի այլ կատեգորիաների հետ՝ արդիական դարձնելով ընտրված թեմայի ուսումնասիրությունը:

Այդ համատեքստում հանցագործության պրովոկացիայի իրավական կարգավորման արդյունավետացման նպատակով՝ միահյուսելով ներպետական և արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումներում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախադեպային իրավունքում արտահայտված դիրքորոշումներում և մի շարք տեսական դոկտրիններում տեղ գտած իրավական թեզերը՝ անհրաժեշտություն է առաջանում վերհանել հնարավոր բացերը և դրանց լուծման տեսանկյունից հանդես գալ գիտականորեն հիմնավորված եզրակացություններով և առաջարկներով, ինչն էլ հենց հանդիսանում է ընտրված թեմայով հետապնդվող նպատակները:

Կատարված աշխատանքի արդյունքում վերը նշյալ նպատակների իրականացմամբ հաջողվել է ցույց տալ թեմայի շրջանակներում այն խնդիրները, որոնք առկա են տարբեր քրեաիրավական ասպեկտներում՝ միաժամանակ հանդես գալով համապատասխան փաստագրումներով և առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներով, որոնց թվում նաև՝ օրենսդրական լրամշակումներով և լրացումներով՝ այդպիսով կատարված աշխատանքի արդյունքներին տեսական և գործնական առումներով հաղորդելով բարձր կարևորություն:

Annotaion. Provocation of a crime is a phenomenon that has its own place in criminal law, and even in the conditions of rich experience formed around it, in legislations, judicial precedents, doctrines of different countries, has various, often contradictory manifestations.

It is noteworthy that the current RA Criminal Code, adopted on May 5, 2021, did not leave out the provisions on the provocation of the crime, as a result of which new horizons were created for the development of the law in this regard and for carrying out further work on targeted application in practical terms.

An integral part of the theoretical and practical legal base formed around the provocation of a crime is also the reflections of the phenomenon discussed in the circumstances excluding criminal responsibility, exempting from criminal responsibility and mitigating criminal responsibility or punishment, which are correlated with other categories known in criminal law, making the research of the selected topic relevant.

In that context, in order to improve the legal regulation of crime provocation by intertwining the legal regulations of domestic and foreign countries, the positions expressed in the case law of the European Court of Human Rights, the Cassation court of RA and the legal theses in a number of theoretical doctrines, it is necessary to highlight the possible gaps and from the point of view of their solution. to come up with scientifically substantiated conclusions and proposals, which are precisely the goals of the chosen topic.

As a result of the work done, with the implementation of the above-mentioned goals, it was possible to show the problems that exist in various criminal law aspects within the framework of the topic, while coming up with appropriate documentation and proposals aimed at solving the existing problems, including legislative amendments and additions, thus adding to the results of the work done theoretically and conveying high importance in practical terms.

Аннотация. Провокация преступления – явление, занимающее особое место в уголовном праве. Даже в условиях богатого опыта, сформированного вокруг этого явления, в законодательствах, судебных прецедентах,

доктринах разных стран оно имеет различные, часто противоречащие друг другу проявления.

Примечательно то обстоятельство, что действующий Уголовный кодекс РА, принятый 5 мая 2021 г., не остался в стороне и от положений о провокации преступления, в результате чего были созданы новые горизонты для развития права в этой части и проведения дальнейших работ по его целевому применению на практике.

Неотъемлемой частью теоретико-практической правовой базы, сформированной вокруг провокации преступления, являются также отражения рассматриваемого явления в обстоятельствах, исключающих уголовную ответственность, освобождающих от уголовной ответственности и смягчающих уголовную ответственность или наказание, которые соотносятся с другими известными в уголовном праве категориями, что делает исследование выбранной темы актуальным.

В этом контексте, в целях совершенствования правового регулирования провокации преступлений путем переплетения правовых норм отечественных и зарубежных стран, позиций, выраженных в судебной практике Европейского суда по правам человека, Кассационного суда РА и правовых положений ряда теоретических учений, необходимо выделить возможные пробелы и с точки зрения их решения выработать научно обоснованные выводы и предложения, что и является целями выбранной темы.

В результате проделанной работы с реализацией вышеуказанных целей, нам удалось продемонстрировать проблемы, которые существуют в различных аспектах уголовного права в рамках темы, одновременно выработать соответствующую документацию и предложения, направленные на решение имеющихся проблем, включая законодательные изменения и дополнения, тем самым дополнив результаты проделанной работы в теоретическом плане и придав им высокую значимость в практическом плане.

Բանալի բառեր *- հանցագործության պրովոկացիա, քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներ, քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանքներ, քրեական պատիժը կամ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ, դոկտրին, նախադեպ, քրեական օրենսգիրք, արտասահմանյան փորձ, աֆեկտ, ինստիտուտ*

Keywords: *Provocation of crime, circumstances excluding criminal liability, circumstances exonerating criminal responsibility, circumstances mitigating criminal punishment or responsibility, doctrine, incident, criminal code, foreign experience, affect, institution,*

Ключевые слова: *провокация преступления, обстоятельства, исключающие уголовную ответственность, обстоятельства, освобождающие от уголовной ответственности, обстоятельства, смягчающие наказание и уголовную ответственность, доктрина, прецедент, уголовный кодекс, зарубежный опыт, аффект, институт,*

Օգտագործված գրականության ցանկ

1. Իսպանիայի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ https://www.mjusticia.gob.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Criminal_Code_2016.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
2. Լիտվայի քրեական օրենսգիրքը հետևյալ հղմամբ՝ https://www.derechos.org/intlaw/doc/ltu1.html (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
3. Սերբիայի քրեական օրենսգիրքը հետևյալ հղմամբ՝ https://www.mpravde.gov.rs/files/Criminal%20%20%20Code_2019.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
4. Նյու Յորք նահանգի քրեական օրենքը հետևյալ հղմամբ՝ https://ypdcrime.com/penal.law/article35.php (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):
5. ԱՄՆ Գերագույն Դատարանի թիվ No. 16–369 որոշումը հետևյալ հղմամբ՝ https://www.supremecourt.gov/opinions/16pdf/16-369_09m1.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

6. Մ. Մելիքյան «Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական առանձնահատկությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում» գիտական հոդվածը, Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր 2022 7-9 (277-279), էջեր 54-61:

7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Grba v. Croatia գործով 2017 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 47074/12:

8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Constantin and Stoian v. Romania գործով 2009 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 23782/06 և 46629/06:

9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Burak Hun v. Turkey, գործով 2009 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 17570/04:

10. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Sepil v. Turkey գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07:

11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ramanauskas v. Lithuania գործով 2008 թվականի փետրվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74420/01:

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Burak Hun v. Turkey, գործով վճիռը, կետ 44,

13. Sepil v. Turkey գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07:

14. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Milinienė v. Lithuania գործով 2008 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 74355/01:

15. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Teixeira de Castro v. Portugal գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 44/1997/828/1034:

16. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ramanauskas v. Lithuania գործով վճիռը:

17. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Tchokhonelidze v. Georgia գործով 2018 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 31536/07:

18. Комиссаров В.С., Яни П.С. Провокационно-подстрекательская деятельность в отношении должностного лица как обстоятельство, исключающее ответственность за получение взятки // Законность. 2010, էջեր 3-8:

19. Волкова И.А. Провокация преступления в контексте отдельных институтов Общей части УК РФ // Закон и право. 2020. № 1, էջեր 106-108:

20. Жарких И.А. Перспективы регламентации и развития института провокации преступления в системе норм уголовного права // Вопросы российской юстиции. 2021. № 12. էջեր 311-319:

21. Дорогин Д.А. «Провокация совершения преступления» как обстоятельство, исключающее уголовную ответственность // Актуальные проблемы уголовного права, криминологии и уголовно-исполнительного права : научные труды кафедры уголовного права. Вып. 7. М., 2017. էջեր 39-52:

22. Милюков С.Ф., Никуленко А.В. Провокация в борьбе с коррупцией: диалектическое противоречие и пути выхода из него // Актуальные проблемы экономики и права. 2016. № 4. էջեր 45-53:

23. Капинус О.С. Практика Европейского суда по правам человека по вопросу провокации преступления и ее уголовно-правовое значение // Законы России: опыт, анализ, практика. 2014. № 12, էջեր. 62-70:

24. «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-151-Ն օրենքը:

25. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի հիմնավորումները՝ www.parliament.am կայքում:

26. Ashworth, A. (2022). “Principles of Criminal Law” (7th edition), Oxford University Press., Oxford, էջեր 100-120:

27. Duff, A., & Green, S., “The Philosophy of Criminal Law: Theory and Practice”, Oxford University Press, Oxford, 2018, էջեր 180-205:

28. David Ormerod and Karl Laird, “Smith and Hogan’s Criminal Law”, 15th edition, Oxford University Press, էջեր 305-310:

29. Ashworth, A. (2022). “Principles of Criminal Law” (7th edition), Oxford University Press., Oxford, էջեր 100-120:

30. Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջեր 89-90:

31. Волженкин Б.В. Провокация или оперативный эксперимент? // Законность. 1996. № 6. էջեր 26-30, Хомич В.М. Оперативный эксперимент без провокации взятки // Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции. 2009. № 2, էջեր 297-317:

32. Борков В.Н. Провокация преступления: уголовно-правовая оценка действий провокатора и спровоцированного / В.Н. Борков // Законы России: опыт, анализ, практика. - 2019. - № 6, Էջեր 68-74:

33. Օմանի քրեական օրենսգիրքը՝ հետևյալ հղմամբ՝ http://www.mola.gov.om (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

34. Զիմբաբվեի քրեական օրենսգիրքը հետևյալ հղմամբ՝ https://www.refworld.org/pdfid/4c45b64c2.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

35. Հարավային Սուդանի քրեական օրենսգիրքը հետևյալ հղմամբ՝ https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/South-Sudan-Penal-Code-TIP-Articles.pdf (հղման վերջին մուտք՝ 13.08.2024թ.):

36. Duff, A., & Green, S. (2018). *The Philosophy of Criminal Law: Theory and Practice*. Oxford University Press. pp. 180-205. Oxford

37. Бранчель И.И., Провокация и инсценировка преступлений при осуществлении оперативно-розыскной деятельности,''Проблемы укрепления законности и правопорядка: наука, практика, тенденции'', 2011, էջեր 72-90:

38. Кугушева С.В. Провокация преступления: проблемы уголовно-правовой квалификации // Уголовное право. – 2005. – № 10. – էջեր. 25-26:

Մելիքյան Մ. - ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի պաշտոնակատար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլհասցե՝ melikmelikyan1994@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 20.08.2024 թ., տրվել է գրախոսության 20.08.2024 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 18.11.2024 թ.: